

ՆԿԱՐԻՉ ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ „ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԱՅ“ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ

«ԷԶՄԻԱԾՆԱՅ» ամսագրի 1946 թ. հունիս-հուլիս միացյալ համարում «Մայր Տաճարի վերանորոգության շուրջը» բաժնում տպագրված նյութերը, Տարագրոսի «Մի քանի խոսք էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության մասին» հոդվածը և խմբագրության ծանոթագրությունը առիթ տվին ինձ պրպտումներ կատարելու Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվում գտնվող «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվանը» ներկայացնող ֆոնդի գործերում, որի արդյունքն եղավ այն, որ ինձ հաջողվեց հայտնաբերել հայ նշանավոր նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Յաղագս վերանորոգության Տաճարին Սբ. Էջմիածնայ» վերաբերող նրա կրող զեկուցագիրը, որի կարևորությունը նկատի առնելով, անհրաժեշտ ենք համարում հրապարակել այն։ Նկարիչ Վ. Սուրենյանցի այդ զեկուցագիրն ուղղված է եղել

Մատթեոս Բ կաթողիկոսին, սակայն սխալմամբ տեղադրված է եղել Մատթեոս Ա կաթողիկոսի գործերում։ Այդ զեկուցագրից երևում է, որ Մկրտիչ կաթողիկոսը (Խրիմյան) Վարդգես Սուրենյանցին հրավիրել էր էջմիածին՝ Տաճարի վերանորոգության խնդրով զբաղվելու համար, ի պատասխան այդ հրավերի նշանավոր արվեստագետ Վ. Սուրենյանցը մի ընդարձակ զեկուցագիր էր ուղարկել Խրիմյան Հայրիկին, որի մեջ մանրամասն շարադրել էր իր տեսակետները և պայմանները Տաճարի վերանորոգության վերաբերյալ, սակայն, ինչպես գրում է Սուրենյանցը, Խրիմյան Հայրիկից ոչ մի պատասխան չի ստացել։ Մեր պրպտումները վերահիշյալ ընդարձակ զեկուցագիրը ևս փսնելու ուղղությամբ տարաքախտաբար մինչև օրս ապարդյուն են անցել։

Զեկուցագրի առաջին էջի վրա հետևյալն է գրված—

«Նորին վեհափառության կաթողիկոսին մերոյ և Հայրապետին Ամենայն Հայոց Տեառն Տեառն Մաքէնսի երկրորդի

Ամենախոնարհ զեկուցումն յաղագս վերանորոգության Տաճարին Սբ. էջմիածնայ.

Վարդգէս Սուրենյանց»:

Հաջորդ էջում զեկուցումն վերնագրված է «Սբ. էջմիածնայ վերաշինության խնդիրը» Զեկուցագրի վրա տարեթիվ չի նշանակված։

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել, որ «Սբ. էջմիածնայ վերաշինության խնդիրը» խորագիրը կրող այս զեկուցագրում հայ նշանավոր արվեստագետ Վարդգես Սուրենյանցը համառոտակի շարադրել է իր տեսակետները հայկական հնադուին այդ Տա-

ճարի վերանորոգության մասին, միաժամանակ խտրելով քննադատության ենթարկելով ճարտարապետ Շտերնի Տաճարի վերանորոգության համար կազմած նախագիծը։ Նա կանգ է առնում նաև Տաճարի վերանորոգության մի շարք կարևոր խնդիրներին վրա, որոնք ակտուալ նշանակություն ունենալով հանդերձ՝ կարող են օգտակար և ուսանելի լինել։